



ՄԱՆԿԱՎԱՐԺ

Սիրելի՛ ուսանողուհիներ, հարգելի՛ աշխատակցուհիներ



Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում երջանկություն և ամենայն բարիք:

Հայ ժողովրդի համար կինը, որ մայր է, քույր և դուստր, միշտ է եղել առանձնահատուկ հոգածության ու նաև պաշտամունքի առարկա.

նրան են ձոնվել ամենաքնքուշ բանաստեղծություններն ու երգերը,

նրան են ընծայվել ամենանվիրական խոսքերը: Եվ բնավ պատահական չէ, որ մեզանում կանանց մեծարման տոնը չի ավարտվում Մարտի 8-ով.

այն դրանով սկսվում է՝ հասնելով մինչև Ապրիլի 7՝ Մայրության ու գեղեցկության տոն: Ուստի վերստին, սիրելի՛ կանայք և աղջիկներ, կանանց տոնական միամսյակի առթիվ ձեզ եմ հղում իմ ամենաջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները:

Երջանի՛կ եղեք, քանզի ձեր երջանկությամբ է

մարդկային երջանկությունը կատարյալ և հնարավոր:

Գուրգեն Խաչատրյան
ՎՊՄԻ ռեկտոր





Դիպլոմներ մագիստրատուրայի հեռակա ուսուցմամբ առաջին շրջանավարտներին

Մարտի 14-ին տեղի ունեցավ ՎՊՄԻ մագիստրոսական հիմնական կրթական ծրագրի բանասիրական ֆակուլտետի 2013-14 ուստարվա (հեռակա) շրջանավարտների ավարտական հանդիսությունը, որի ընթացքում հանձնվեցին «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսների դիպլոմները:

Միջոցառումը նշանակալի էր նաև նրանով, որ բուհը մագիստրատուրայի հիմնական կրթական ծրագրի հեռա-

հուն: Շնորհակալություն ձեր ծնողներին, որ այդ պատասխանատու գործը հենց մեզ վստահեցին: Շնորհակալություն այն դասախոսներին, ովքեր ձեզ դասավանդել են, դարձրել որակյալ մասնագետներ»:

Շրջանավարտներին ողջունեց նաև հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հասմիկ Հարությունյանը. «Սիրելի՛ շրջանավարտներ, վերջապես ետևում են դասերը, քննաշրջանները, հուզումները, հաղթանակներն ու երբեմն էլ՝ հիասթափությունները: Այդ ամենի արգասիքն այսօր տեսնում ենք: Ավարտվեց ուսանողական կյանքը, սակայն ուսումը դեռ չի դադարում. կյանքի լեզուն հասկանալու համար անհրաժեշտ է ողջ կյանքում սովորել: Մայր բուհի դռները միշտ բաց են ձեր առջև»:



Ներկաներին ողջունեց և իր տպավորություններից խոսեց շրջանավարտների պետական քննության հանձնաժողովի նախագահ Համլետ Մաթևոսյանը. «Ես ուղղակի հիացած եմ ուսանողների հայոց լեզվի և գրականության խոր իմացությամբ: Շնորհակալություն բուհի ղեկավարությանը, դասախոսներին, որոնց շնորհիվ այսքան լավ մասնագետներ են պատ-

կա համակարգի առաջին շրջանավարտներն էր տալիս:

Մեծ հանդիսությամբ բեմ բերվեցին ՀՀ և ՎՊՄԻ դրոշմերը, հնչեցին հիմները, որոնք ներկաները ունկնդրեցին հոտնկայա:

Դահլիճը լեփ-լեցուն էր. ներկա էին դասախոսներ, մտերիմներ ու բարեկամներ, ովքեր բարձր տրամադրությամբ և ծաղիկներով եկել էին առաջինը շնորհավորելու օրվա հերոսներին:

Ողջույնի համար խոսքը տրվեց բանասիրական ֆակուլտետի ղեկան Ալբերտ Պողոսյանին. «Շնորհավորում եմ ձեզ, սիրելի՛ ուսանողներ, մասնագիտական տոնի առթիվ: Հավաստիացնում եմ բոլորիդ, որ հեռակա համակարգում ուսանելով ևս մեր ուսանողները լիովին պատրաստ են իրենց մասնագիտությամբ աշխատելու. դրա վառ ապացույցն էին ուսանողների պետական քննության փայլուն արդյունքները»:

Շրջանավարտներին շնորհավորանքի խոսք հղեց ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը. «Այսօր իսկապես տոնական օր է մեր բուհում. պատիվ ունենք հերթական սերունդը ճանապարհելու նոր կյանք: Շնորհավորում եմ ուսանողներին, որոնց հրաժեշտ ենք տալու: Շնորհակալ ենք, որ ձեր կրթության շարունակությունը գտաք մեր բու-

րաստվել: Հարգանքներիս հավաստիքը ձեզ և մայր բուհին»:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերից հետո սկսվեց թերևս ամենասպասվածը՝ դիպլոմների հանձնման արարողությունը:

Շրջանավարտներին մագիստրոսի կոչմամբ ձեռնադրեց հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ. Հարությունյանը, դիպլոմները հանձնեց բանասիրական ֆակուլտետի ղեկան Ա. Պողոսյանը:

Հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտները, չթաքցնելով հուզմունքն ու ուրախությունը, փոխադարձ շնորհակալության խոսքեր հնչեցրին և իրենց դասախոսներին փոքրիկ հուշանվերներ հանձնեցին:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսները հանդիսավոր երդվեցին ամբողջ կյանքում նվիրվել ընտրած մասնագիտությանը, ամբարած գիտելիքներն օգտագործել ի նպաստ հայրենիքի և մատաղ սերնդի, մշտապես կատարելագործել մասնագիտական կարողությունները, երբեք չմոռանալ նրանց, ովքեր կրթել են, ում հետ սովորել են, ամենուր և միշտ բարձր պահել մայր բուհի անունն ու հեղինակությունը:



ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆ.

«ԵՍ ՄԻՇՏ ՁԵՋ ՅԵՏ ԵՄ, ՁԵՐ ԿՈՂՔԻՆ»

Փետրվարի 19-ին լրացավ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակը: Այս առիթով ՎՊՄԻ գիտական կաթինետի վարիչ Կարինե Ղազարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրական միջոցառում, որը կրում էր «Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր կողքին» խո-



րագիրը: Ցերեկույթին անդրադարձ կատարվեց Թումանյանի կյանքին ու գործունեությանը, նրա գրական հարուստ ժառանգությանը: Բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Լաուրա Եղիազարյանը, Սրբուհի Գասոյանը, Շողիկ Պետրոսյանը, Հերմինե Այվազյանը ներկայացրին գրողի մասին Ավ. Իսահակյանի, Լեոյի, Ա. Օզանյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. Թոթովենցի հուշերից պատահիկներ, որոնք բացահայտում են Թումանյանի մարդկային տեսակը, նրա ընտանեկան, ընկերական, հասարակական կյանքը:

«Մեծն Թումանյանի անունը կրող բուհը չէր կարող չնշել խորհրդանշական այս տարելիցը, – ասաց Կ. Ղազարյանը: – Միջոցառման նպատակն է ուսանողներին ճանաչելի դարձնել մեծ գրողի գրական ժառանգությունը, նրան ներկայացնել այն ժամանակակիցների հուշերով, ովքեր շփում են ունեցել Թումանյանի հետ, և որոնց վկայություններն առավել հավաստի են: Ցանկություն կար նաև այս միջոցառմամբ ընթերցանություն քարոզել, որ երիտասարդները լավ ճանաչեն հայ դասականներին»:

Թումանյանը մի առիթով ասել է, որ իր կյանքի ամենամեծ հարստությունը մայրն է եղել, բայց և պնդում էր, որ

ինչ լավ բան ունի, հորից է ժառանգել: Դժվար է եղել նրա ուղին, երբեմն կենցաղն ու առօրյա հոգսերն այնքան են ճնշել հանճարեղ բանաստեղծին, որ նա կտրվել է գրականությունից՝ փորձելով միջոցներ գտնել ընտանիքի կարիքները հոգալու համար:

Թումանյանը պաշտում էր Լոռվա աշխարհն ու բնությունը, այն համարում իր ներշնչանքի աղբյուրը:

Միջոցառման ընթացքում հնչեցին Թումանյանի բանաստեղծություններից, քառյակներից, ցուցադրվեց գրողի կյանքին նվիրված գեղեցիկ ֆիլմ:

Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանն ուսանողներին նվիրեց վերջերս հրատարակված իր «Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ» գիրքը: Ուսանողները ռեկտորին խնդրեցին ընծայագրել գրքերը:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց Կ. Ղազարյանին գեղեցիկ նախաձեռնություն կյանքի կոչելու համար: «Կարևորն այն է, որ մենք այսօր շփվում ենք Թումանյանի նման մեծության հետ, ունենում անգամ կարդալով հայտնաբերում ենք նորը, գեղեցիկը: Շնորհակալություն նաև մեր ուսանողներին, որ հեռու չեն ընթերցանությունից: Ես վստահ եմ, որ եթե նույնիսկ նրանք գիրքը չեն պաշտում, ապա գոնե խոնարհվում են գրքի առաջ: Դասականներից հեռու գտնվել կնշանակի կտրվել մայրական կաթից: Լավ բանասեր չեն դառնում առանց ընթերցանության», – ասաց Գուրգեն Խաչատրյանը:

Գիրք նվիրելու օրվա առթիվ բուհի ռեկտորը, բանասիրական ֆակուլտետի դեկան Ալբերտ Պողոսյանը և գրականության ամբիոնի դասախոսներն ուսանողներին նվիրեցին նաև հայ դասականների գեղարվեստական գրքերից:

Թումանյանն աստվածընտրյալ պոետ էր հոգով և կոչումով, նրա գրվածքները հավերժորեն արդիական են, սիրված ու պահանջված ընթերցասեր հանրության կողմից:

Նա արդարև միշտ մեզ հետ է, մեր կողքին:

Նարինե ՆԵՐՍԵՍՅԱՆ



ԿՆՔՎԵՑ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Փետրվարի 25-ին ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի (որպես գործատուի) և արհկոմի նախագահ Ռոբերտ Գրիգորյանի (որպես աշխատակիցների ներկայացուցչի) միջև կնքվեց կոլեկտիվ պայմանագիր: Պայմանագրի ստորագրմանը ներկա էին արհկոմի անդամները, ֆակուլ-

խատանքային հարաբերությունները՝ ներառելով.

- աշխատանքի վարձատրության պայմանների, աշխատանքի վարձատրության կարգավորման մեխանիզմները,
- աշխատանքի պայմանները,
- աշխատաժամանակի և հանգստի

ղություն և վերահսկողություն իրականացնելու կարգը,

- պայմանագիրը չկատարելու համար պատասխանատվություն,
- կոլեկտիվ աշխատանքային վեճերի դեպքում կողմերի՝ միմյանց դեմ պահանջների ներկայացման կարգն ու պայմանները,
- կողմերի համաձայնությամբ՝ այլ հարցեր:



տետային, վարժարանի, քոլեջի, վարչազորադարանային և տնտեսական մասի արհմբյուրոնների նախագահները, նրանց տեղակալները:

Համաձայն ՀՀ ԱՕ 45 հոդվածի՝ կոլեկտիվ պայմանագիրը կողմերի միջև գրավոր ձևով կնքված կամավոր համաձայնություն է, որը կարգավորում է աշխատողների և գործատուի միջև աշ-

խատանքային հարաբերությունները, աշխատողների թվաքանակի կրճատման կարգի և պայմանների, կրճատումների դեպքերում՝ երաշխիքները,

- աշխատանքի անվտանգության և հիգիենայի պայմանները,
- աշխատողների առողջության պահպանման պայմանները,
- աշխատողների մասնագիտություն ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու և վերաորակավորվելու պայմանները,
- պայմանագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրա կատարման նկատմամբ հսկո-

րի հավաստմամբ՝ այս անգամ ևս պայմանագիրը վերանայվել է նախապես կազմված հանձնաժողովի անդամների կողմից, արվել են տարբեր առաջարկություններ: Նա նաև նշեց, որ երկու կողմերի համաձայնությամբ անհրաժեշտության դեպքում այն ստորագրվելուց հետո էլ կարող է փոփոխությունների ենթարկվել:

Սույն կոլեկտիվ պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 25-ից և գործում է մինչև 2017 թվականի փետրվարի 25-ը:

(Պայմանագրի էլեկտրոնային տարբերակը գետեղված է ինստիտուտի ներքին ցանցի արհկոմի բաժնում):

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՕՐԸ ՎՊՄԻ-ՈՒՄ

«Ա՛խ լեզուն, լեզուն. լեզուն որ չըլնի, մարդ ընչի՞՞ սնան կըլնի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն աս ու հավատը»: Արքայանական այս տողերն ավելի են նշանավորվում, երբ ազգովի նշում ենք Մայրենի լեզվի օրը:

1999 թ. նոյեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գերագույն համաժողովի 30-րդ նիստում փետրվարի 21-ը հռչակվել է Մայրենի լեզվի միջազգային օր, որը նշվում է սկսած 2000 թվականից: Օրվա խորհուրդն ու նպատակն է՝ նպաստել լեզվական և մշակութային բազմաձևության զարգացմանը:

Մայրենի լեզվի միջազգային օրը ՎՊՄԻ հայոց լեզվի ամբիոնը նշանավորեց երկու միջոցառումներով՝ բուհական ռադիոյի տոնական թողարկմամբ՝ իրականացված բանասիրական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ, և մայրենիին նվիրված շարադրությունների մրցույթով:

ՎՊՄԻ բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Պողոսյանը, հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ. Հարությունյանը, ամբիոնի դասախոս Հ. Մելքոնյանը հանդիպում ունեցան ուսանողների հետ, խոսեցին օրվա խորհրդի մասին, շնորհավորեցին նրանց տոնի առթիվ՝ կոչ անելով սեփական խոսքի յուրաքանչյուր դրվագով նպաստ բերել մեր մայրե-

նիի՝ միշտ հին ու նոր հայերենի կենսունակությանը:

«Ուրախ եմ, որ կարևորում եք այս օրը, որ մայրենիի հանդեպ այսպիսի վերաբերմունք ունեք: Մայրենի լեզվի պահպանումը մեր ազգի գոյատևման միակ ճիշտ ճանապարհն է: Սիրեք մայրենին, որ ճիշտ դաստիարակեք և ուսուցանեք գալիք սերունդներին», - նշեց Ա. Պողոսյանը:

«Հիշեք, որ սա տոն է, օրվա հերոսներն էլ դուք եք՝ լեզվի ապագա մասնագետները», - հավելեց հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ. Հարությունյանը:

Հանդիպման ժամանակ տեղի ունեցավ նաև մրցանակային տեղեր գրաված աշխատանքների պարգևատրման արարողություն. լավագույն 4 շարադրության հեղինակները պարգևատրվեցին պատվոգրերով և լեզվի ամբիոնի դասախոսների հեղինակած գրքերով:

Առաջին տեղը գրավեց Նինա Հովհաննիսյանը (բանասիրական ֆակուլտետ, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս), երկրորդ տեղը՝ Ստելլա Մխիթարյանը (մանկավարժության ֆակուլտետ, «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություն, 2-րդ





← 4 կուրս), երրորդ տեղը կիսեցին Թինա Այվազյանը (բանասիրական ֆակուլտետ, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 2-րդ կուրս) և Անի Թումանյանը (բանասիրական ֆակուլտետ, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս): Մեզանից յուրաքանչյուրը հպարտանում է պերճաշուք հայոց լեզվի գեղեցկությամբ, մեսրոպյան տառերով, հայոց

գրի բազմադարյան պատմությամբ: Եթե մենք ուզում ենք, որ մեր լեզվի գեղեցկությունը չկորչի և հասնի ապագա սերունդներին, որքան հնարավոր է պետք է խոսենք անաղարտ հայերենով:
Օտար լեզուները մեզ զինում են հիմնարար գիտելիքներով, նպաստում հաղթահարել կյանքի դժվարին փորձությունները, սակայն հոգու լեզուն, միևնույնն է, մայրենին է:

ՕՏԱՐ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՆՆԱԽԱԴԴԵՊ ԱՌԱՋԱՐԿ

Մեր ժամանակներում խիստ անհրաժեշտ է դարձել լեզուների իմացությունը: Ժողովրդական ասացվածքն էլ հուշում է՝ ինչքան լեզու գիտես, այնքան մարդ ես: Լեզուների իմացությունը կտրուկ մեծացնում է լավ աշխատանք գտնելու հավանականությունը, ուսանողներին հնարավորություն ընձեռում միջազգային տարբեր ծրագրերի շրջանակներում կրթությունը շարունակելու արտասահմանյան բուհերում:
Այս ամենը հաշվի առնելով՝ ՎՊՄԻ-ում ևս մեծ տեղ է տրվում լեզուների ուսուցմանը, և այդ ուղղությամբ տեսական ու գործնական լուրջ աշխատանքներ են իրականացվում:

Դեռ 2012 թ.-ից բուհում գործում է Լեզուների ուսուցման կենտրոն, որտեղ կազմակերպվում են դասընթացներ հետևյալ 5 լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն: Դասընթացները կազմակերպվում են Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգի լեզվական 6 մակարդակների պահանջներին համապատասխան: Այդ մակարդակներն են՝ A1 մակարդակ՝ նախնական, A2 մակարդակ՝ նախաշեմային, B1 մակարդակ՝ շեմային, B2 մակարդակ՝ հետշեմային, C1 մակարդակ՝ գործնական լեզվի արդյունավետ տիրապետում, C2 մակարդակ՝ լեզվի կատարյալ իմացություն կամ վարպետություն: Լեզուների ուսուցման կենտրոնի ղեկավար Գոհար Դոխոյանի հավաստմամբ՝ այժմ կենտրոնում օտար լեզուներ ուսումնասիրում են 50

ուսանողներ, որոնց դասավանդում են փորձառու մասնագետներ ժամանակակից դասավանդման մեթոդներով: Կենտրոնն ապահովված է լեզվական դասընթացների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական սաքավորումներով:
Նշենք նաև, որ յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո մասնակիցները գրում են ամփոփիչ թեստ և այն հաջող հանձնելու դեպքում ստանում վկայական: ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի նախաձեռնությամբ դասընթացներն անցկացվում են աննախադեպ մատչելի գներով (ՎՊՄԻ ուսանողների համար՝ ամսական ընդամենը 3000 դրամ, մյուս քաղաքացիների հա-



մար՝ 8000 դրամ):
Լեզուների ուսուցման կենտրոնը կազմակերպում է նաև օտար լեզուների դասավանդման արագացված եռամսյա դասընթացներ:
Սա երիտասարդներին տրված ևս մեկ հնարավորություն է՝ ուշադրություն դարձնելու օտար լեզուների ուսուցմանը, քանի որ հաջողության հասնելու կարևոր պայմանը ոչ միայն բարձրագույն կրթությունն է, այլև լեզուների իմացությունը:
Լեզուների իմացությունը կարևոր պատուհան է աշխարհը նորովի տեսնելու և ընկալելու համար:



ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ՎՊՄԻ 60 ԱՌԱՋԱԴԵՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Մարտի 11-ին ՀՀ պետական բուհերի առկա ուսուցման 1-ին կուրսերի անվճար համակարգում չընդգրկված 780 ուսանողներ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ստացան կրթաթոշակի հավաստագրեր:

Հիմնադրամի կողմից բարձր առաջադիմություն ունեցող ՎՊՄԻ 60 ուսանողներ ևս արժանացան հավաստագրերի (Անտաշյան Էլենուորա, Մեհրաբյան Անի, Մարուքյան Ռոզա, Բաղդասարյան Նարինե, Օրուլյան Հերմինե, Ալավերդյան Էմմա, Մովսիսյան Լիլիթ, Շահբազյան Արփինե, Սարյան Մարինե, Նասլյան Մելինե, Խաչատրյան Ալվարդ, Խոջայան Անի, Սարգսյան Աննա, Դանիելյան Նելլի, Հարությունյան Կիմա, Դավիթավյան Մելինե, Ավագյան Տատյանա, Վերանյան Լիլիթ, Թաթևյան Արփինե, Քոչարյան Անժելիկա, Մկրտչյան Արփինե, Ջաղացպանյան Էլենա, Սարգսյան Լուսինե, Ջոհրաբյան Հայկուհի, Դալլաքյան Մարի, Մկրտչյան Արմինե, Ծա-

տուրյան Մելինե, Հանթախյան Անահիտ, Վարդունյան Սիլվա, Ստեփանյան Գայանե, Սարգսյան Իննա, Հակոբյան Արմեն, Ղազարյան Վարդուհի, Սիրադեղյան Ինգա, Մաթոսյան Ամալյա, Քալաշյան Հասմիկ, Շահվերդյան Սիրանուշ, Հակոբյան Տաթևիկ, Սոլունոյան Տաթև, Անդրեասյան Սաթենիկ, Հարությունյան Գոհար, Տեր-Մակարովա Սվետլանա, Ստեփանյան Ինեսա, Գևորգյան Քրիստինե, Դանիելյան Գրետա, Թովմասյան Անի, Մինասյան Լուսինե, Ղաբուլյան Նարինե, Շեկոյան Լիաննա, Մանուկյան Միեր, Ջաքարյան Տաթևիկ, Դովմազյան Լիլի, Անդրեասյան Լիլիթ, Ավագյան Աննա, Ալեքսանյան Վիկտորիա, Բաղդամյան Հայարհի, Աբրահամյան Արագած, Գրիգորյան Ալինա, Արտաշյան Լիանա, Սահրադյան Գայանե, Շախպազյան Գարիկ):



Մրցույթին մասնակցել են պետական բուհերի առկա ուսուցման բակալավրիատի առաջին կուրսերի անվճար համակարգում չընդգրկված ուսանողները: Կրթաթոշակ տրամադրելու նպատակով ՀՀ կառավարությունը ՀԵՀ-ին է հատկացրել 60 մլն դրամ:

ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմը շնորհավորում է խրախուսանքի արժանացած բոլոր ուսանողներին, մաղթում մասնագիտական նորանոր հաջողություններ:

Մրտի Երգանիկ Րոպեներ

*Մերը գոյության հանճարն է միակ:
Սիրո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ,
Մահն է պարզապես: (Ալիսիա Կիրակոսյան)*

Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և հավատարիմ 14 զինվորների տոնը (հայ եկեղեցու տոնացույցով՝ նաև երիտասարդների օրհնության օր) ՎՊՄԻ-ում նշվեց փետրվարի 14-ին: Բուհի մշակույթի կենտրոնի, արհկոմի, ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել էր գեղեցիկ միջոցառում՝ «Մրտի երգանիկ Րոպեներ» խորագրով:

Միջոցառման շրջանակներում ուսանողները մեկնաբանեցին Սուրբ Սարգիս և Սուրբ Վալենտին տոների խորհուրդը, հնչեցրին սիրային բանաստեղծություններ, երգեր, որոնք դափնիքում ծափերի ալիք էին բարձրացնում: Տոնական համարներն ընդմիջվում էին խաղ-մրցույթներով, որոնց հաղթողներն արժանացան խրախուսական նվերների:

Միջոցառման մասնակիցները բոլոր ներկաներին սիրտ-

փուչիկներ նվիրեցին: Նրանց հնարավորություն տրվեց սիրո խոստովանություն անել բացիկների միջոցով, որոնք ընթերցվեցին հանդիսավարների կողմից: Նամակների մեծ մասն անանուն էր, սակայն՝ սիրով, կարոտով, անփոխարժեք սիրո տազնապով լի:

ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ով ներկա էր միջոցառմանը, բոլոր ուսանողներին մաղթեց անսահման սեր, նրանցից յուրաքանչյուրին՝ անեղծ սիրո և երջանկության բերկրանք:

Ուսանողներից ոմանք սիրո խոստովանություններ հնչեցրին հենց բեմից, ոմանք ներկայացրին իրենց հեղինակային ստեղծագործությունները:

Տոնական միջոցառումից հետո բուհի բակում ուսանողներին էր «սպասում» Սուրբ Սարգիս զորավարը: Նա սպիտակ նժույգով շրջեց բակում և երիտասարդներին աղի բլիթներ բաժանեց:





ՎՊՄԻ հենակետային վարժարանի ուսուցչուհի Սոֆի Սարգսյանն անգլիական հոսքի 11-րդ «ա» դասարանում կազմակերպել էր բաց դաս՝ նվիրված ԱՄՆ-ին:

Աշակերտներն ամենայն մանրամասնությամբ ներկայացրին այդ երկրի խոշոր նահանգներն ու քաղաքները: Խոսվեց ԱՄՆ-ի աշխարհագրության, ռելիեֆի, օգտակար հանածոների, կլիմայի, պատմության, պետական կառավարման համակարգի, արդյունաբերության ու գյուղատնտեսության մասին:

զան ենք լինում Հայաստանում, իսկապես հիացած ենք հայոց երկրի բնաշխարհով, եկեղեցիների, խաչքարերի հնամյա գեղեցկությամբ: Ուրախ ենք նաև ՎՊՄԻ հենակետային վարժարան մեր այցի համար: Զարմացած են, որ այսքան վարժ խոսում եք անգլերեն, որ մեր երկրի մասին ավելին գիտեք, քան գուցե որոշ ամերիկացիներ: Շնորհակալություն այսպիսի գեղեցիկ դաս կազմակերպելու համար:

Դասը եզրափակվեց ԱՄՆ-ի մասին երգի

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻ «ԱՅՅԸ» ՎՊՄԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ



տնտեսության մասին: Վարժարանի շնորհալի սաները մեկնաբանեցին նաև ԱՄՆ-ի խորհրդանիշները, մասնավորապես՝ պետական դրոշը:

Գունազարդ նկարների օգնությամբ աշակերտները ներկայացրին ԱՄՆ-ի տեսարժան վայրերը՝ Ազատության արձանը, Նյու Յորքի Թայմս Սքուեր (Times Square) հրապարակը, Հոլիվուդը, Հավայան կղզեխումբը, Ժայռոտ լեռները, Փոլ Գետտոի մշակույթի կենտրոնը, Յունիվերսալ ստուդիան, Գոլդեն Գեյթ Բրիջ կամուրջը, Գրանդ Կանյոնը, Դիսնեյլենդը Կալիֆոռնիայում և այլն:

Անդրադարձ կատարվեց նաև ամերիկահայ հայտնի դեմքեր՝ աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկուն, գրող Վիլյամ Սարոյանին և մեծահարուստ Քլոր Բլոքբորյանին:

Բաց դասի ընթացքում օգտագործված տեսապարագաները, նկարներն ու քարտեզները, անգլերեն լեզվով մատուցվող հետաքրքրաշարժ նյութերը ներկաներին ստիպեցին մտովի տեղափոխվել Միացյալ Նահանգներ:

Այդ պատկերացումները համալրվեցին, երբ դասասենյակ «մտան» ԱՄՆ առաջին սևամորթ նախագահ Բարաք Օբաման և նրա սիրելի կինը՝ Միշելը: Աշակերտներին իսկապես հաջողվել էր մարմնավորել նրանց կերպարները: Բաց դասին «հյուրընկալած» նախագահը հետևյալ խոսքերով ողջունեց բոլոր ներկաներին. «Սենք առաջին ան-

խմբակային կատարմամբ: Օտար լեզուների ամբիոնի դասախոս Կարինե Սարգսյանը բոլոր ներկաների կողմից շնորհակալություն հայտնեց Ս. Սարգսյանին. «Հրաշալի դաս էր, շնորհակալություն ձեր ուսուցչին այդ ամենը ձեզ փոխանցելու համար: Այո, դուք ավելին գիտեք այդ երկրի մասին, քան որոշ ամերիկացիներ: Տա՛ Աստված, որ մի օր էլ նման կերպ ԱՄՆ-ում Հայաստանը ներկայացնելու առիթ ու պատիվ ունենաք»:

Սոֆի Սարգսյանը հավելեց. «Ուզում եմ նշել, որ նյութերի հավաքագրման աշխատանքն աշակերտներն ինքնուրույն են արել, որի համար այս դասի բոլոր մասնակիցները կատանա գերազանց գնահատականներ: Եթե ես նրանց հանդեպ ցուցաբերում եմ խստություն, ապա միայն նրա համար, որ ձգտեմ ավելիին և ավելի լավ սովորեն: Հավաստիացնում եմ, որ բարձր առաջադիմության դեպքում այս միջոցառումը միայն սկիզբը կլինի»:

Իսկապես, աշակերտների անկաշկանդ բանավոր խոսքը, ներկայացված նյութերի հարուստ բովանդակությունը վկան են այն բանի, որ նրանց հետ անհրաժեշտ աշխատանք է տարվում ոչ միայն անգլերեն լեզվի իմացությունն ապահովելու, այլ նաև բազմակողմանի զարգացած աշակերտներ կրթելու համար:

ՎՊՄԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԽՈՒ ՀԱՋՈՂՈՒՅՈՒՆՆԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԾՆԵՌԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐՈՒՄ

Փետրվարի 24-ից մարտի 2-ը Ծաղկաձորում անցկացված Համահայկական ծնեռային առաջին խաղերին մասնակցեց նաև ՎՊՄԻ պատմաաշխարհագրական ֆակուլտետի «ՍՄԳ» 4-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Սաղաքյանը: Նա լեռնադահուկային սպորտի հսկա ոլորավայրէջք մրցաձևում գրավեց 3-րդ տեղը և արժանացավ դիպլոմի:

Նշենք, որ Համահայկական ծնեռային առաջին խաղերի ցանկում ընդգրկված էր 4 մարզածև՝ դահուկային, լեռնադահուկային սպորտ, սնուրբորդ և տափօղակով հոկեյ: Խաղերին մասնակցեցին 11 երկրների 22 քաղաքների 401 մարզիկներ: Վանաձոր համայնքը թիմային հաշվարկով գրավեց 9-րդ տեղը:

Շնորհավորում ենք Սիրանուշին հերթական մարզական հաջողության համար՝ մաղթելով բազում հաղթանակներ:





ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ՝ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ «ՄԱՍԼԵՆԻՑԱ» ՏՈՆՈՎ

Գարնան առաջին օրը ՎՊՄԻ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ բուհի «Բազում» ուսումնամարզական հանգրվանում շուքով նշվեց ռուսական ժողովրդական տոներից մեկը՝ Մասլենիցան: Տոնն ուսանողների հետ նշելու էին ելել ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, աշխատակազմի ղեկավար, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Վանո Եղիազարյանը, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրոյանը, ֆակուլտետի ղեկավարները և պրոֆեսորադասախոսական կազմից ներկայացուցիչներ:



Հարկ է նշել, որ ռուսական Մասլենիցան ու հայկական Բարեկենդանը նշանակության առումով եսկան տարբերություններ չունեն. երկուսն էլ ուրախ տոներ են և խորհրդանշում են գարնան գալուստը: Ինչպես հայերը՝ Բարեկենդանը, այնպես էլ ռուսները Մասլենիցան անցկացնում են զվարճանքով, կատակներով, երգ ու պարով: Միջոցառման կազմակերպիչներն ըստ պատշաճի պահպանել էին տոնի ավանդույթներն ու ծիսակարգը, և ռուսական շունչն ու զվարթ տրամադրությունը ամբողջ օրվա ընթացքում թևածուլ էին հանգրվանում: «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության և մյուս բաժինների շնորհալի ուսանողներն ասպառվում էին տոնական բարձր տրամադրություն՝ ռուսական ժո-

ղովրդական երգ ու պարով, խաղիկներով ու տաղիկներով, փոքրիկ բեմադրություններով, ինչպես նաև հետաքրքիր մրցույթներով ու կատակներով:

Տոնական տրամադրությունը փոխանցվեց նաև պրոֆեսորադասախոսական կազմին, ովքեր նույնպես դարձան տոնի անմիջական մասնակիցը՝ ակտիվությամբ ցուցաբերելով խաղ-մրցույթների, պարերի ընթացքում: Ուրախ երգ ու պարից հետո բոլոր մասնակիցները տոնական սեղանների շուրջ ճաշակեցին օրվա ավանդական կերակուրները՝ նրբաբլիթներ, օղաբլիթներ և ռուսական այլ ուտեստներ, որոնք պատրաստվել էին ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսների խոհարարական հմտությունների շնորհիվ:

Տոնախմբության վերջում ներկաները միասին խարուկի վրա այրեցին տոնի գլխավոր հերոսին՝ ծղոտե խրտվիլակը՝ խորհրդանշելով ծնունդ ավարտը և հավատալով, որ նրա հետ այրվեցին ծնունդն ընթացում կուտակված հնի ու վատի մնացուկները: Ներկաներից շատերը խարուկում այրեցին նաև թղթերի վրա նախապես գրված երազանքները՝ հավատով, որ դրանք այս գարնան անպայման իրականություն կդառնան:

Ռուսաց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ այս գեղեցիկ տոնի նշումը ՎՊՄԻ-ում դարձել է ավանդական և սպասված:



ՎՊՄԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓՈՔՐ ՍԱՆԵՐԻ ՄԵԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարանի սաներն իրենց հաջողություններով միշտ բարձր են պահել թե՛ իրենց, թե՛ վարժարանի անունը: Այս անգամ մեր սաները հաջողության հասան սպորտի բնագավառում:

Ընթշամարտի հանրապետական առաջնության 85 կգ քաշային կարգում առաջին տեղն է զբաղեցրել Հովհաննես Մխիթարյանը: «Հիմա պատրաստվում ենք եվրոպայի առաջնությանը և հույս ունենք, որ կրկին մեծ հաջողություններ կարձանագրենք», – մեզ հետ զրույցում նշեց Հովհաննեսը: Ի դեպ, Հ. Մխիթարյանը մասնակցել է միջազգային տարբեր մրցաշարերի, որտեղ արժանացել է մրցանակների կամ դարձել մրցաշարի հաղթող:

Ծանրամարտում նույնպես մեր սաները հաջողության են հասել: Հայաստանի առաջնությունում 85 կգ քաշային կարգում երրորդ մրցանակային տեղն է զբաղեցրել Ռոբին Բալջ-

յանը, ով նույնպես պատրաստվում է ավելի մեծ առաջնությունների:

Նորանոր հաջողություններ ենք մաղթում մեր սաներին:

«Ապագա մանկավարժ»
երկաթբաթերթ
Վկայական՝ 727
2001, ԳԳ, Վանաձոր,
Տիգրան Մեծի 36
Էլ. փոստ՝ mankavarzh@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՄԻ
Հրատարակիչ՝
«Ապագա մանկավարժ»
երկաթբաթերթի խմբագրություն
Տպաքանակը՝ 100
Տպագրվել է ՎՊՄԻ-ի տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Պատասխանատու՝ Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հանակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆԻ